ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 02 >> 05 2011թ. N: 41 ք.Գյումրի

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի <<Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովի կանոնակարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 432 և 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1337-ն որոշումներում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին>> N 1402-Ն որոշման 4.1-րդ կետի դրույթներով.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում բնակարան ստացած ընտանիքների կողմից զբաղեցված ոչ հիմնական շինություններից՝ բնակությունից չազատվող և քանդման ոչ ենթակա շինությունների ընտրության նպատակով ուսումնասիրություններ կատարելու համար ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբի ղեկավար Տիգրան Հարությունյանին՝ բնակարան ստացած ընտանիքների դիմումները ստանալուց հետո աշխատանքային խմբի կողմից 5-օրյա ժամկետում կատարված ուսումնասիրությունների հիման վրա կազմել ոչ հիմնական շինությունը բնակությունից ազատելու կամ չազատելու վերաբերյալ հիմնավորված եզրակացություն:

3. Սույն կարգադրության հսկողությունը վերապահել ինձ :

Ա.ԳԻԶԻՐՅԱՆ

Իսկականի հետ՝ ճիշտ է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 12 >> 05 2011թ. N: 42 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՄՈՎՍԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգի» 3-րդ կետի դրույթներով եւ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետ Մովսես Մանուկյանի զեկուցագիրը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետ Մովսես Մանուկյանին 2011 թվականի մայիսի 13-ին գործուղել ք.Երեւան՝ ԱՊՀ մասնակից պետությունների սերմնաբուծության հարցերով միջկառավարական համակարգող խորհրդի հերթական նիստին մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տեւողությունը 1 օր՝ 2011 թվականի մայիսի 13-ին:

Ա.ԳԻԶԻՐՅԱՆ

Իսկականի բնագիր ճիշտ է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<24>> 05 2011թ. N: 43 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11_Ի ԹԻՎ 28 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի դրույթներով.

1. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային հանձնաժողովի կազմում Սամվել Ղազարյանի փոխարեն ընդգրկել Հովհաննես Հովհաննիսյանին, կազմում ընդգրկել Ամալյա Ադամյանին և Կարինե Գրիգորյանին:

2. Այդ կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2008 թվականի մարտի 11-ի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային հանձնաժողով ստեղծելու մասին>> N 28 կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

1) <<Ս.Ղազարյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, անդամ>> բառերը փոխարինել <<Հ. Հովհաննիսյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, անդամ >> բառերով:

2) <<Տ. Ղարիբյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ, անդամ>> բառերից հետո լրացնել <<Ա. Ադամյան – Գյումրու զբաղվածության մարզային կենտրոնի տնօրեն, անդամ >>, <<Կ. Գրիգորյան - <<Ագաթ>> հատուկ կարիքներով կանանց կենտրոն հասարակական կազմակերպության նախագահ, անդամ /համաձայնությամբ/>> բառերը:

Ա. ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<24 >> 05 2011թ. N: 44 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՀԱՍՄԻԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1792-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կանոնադրության >> 17-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված <<Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգի>> 3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական Հասմիկ Կիրակոսյանի զեկուցագիրը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական Հասմիկ Կիրակոսյանին 2011 թվականի մայիսի 24-ին գործուղել ք. Երևան Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն՝ Խաչատուր Ավետիսյանի 85-ամյակին մասնակցության և առաջիկա միջոցառումները մշակույթի նախարարության հետ համաձայնեցնելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը 2 օր՝ 2011 թվականի մայիսի 24-ից մինչև 2011 թվականի մայիսի 25-ը ներառյալ:

Ա. ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«31» մայիսի 2011թ. N: 45 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ Գ.ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ԵՎ «ԱԽՈՒՐԻԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՄՈՒՇԵՂ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 158-րդ և 159-րդ հոդվածներով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժ» կետի դրույթներով և հիմք ընդունելով Մուշեղ Մուրադյանի 2011թվականի մայիսի 27-ի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Գ.Գյուլբենկյանի անվան վիրաբուժական հիվանդանոց» և «Ախուրիկի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերությունների վերստուգող Մուշեղ Մուրադյանին տրամադրել 20 աշխատանքային օր ամենամյա նվազագույն արձակուրդ՝ 2011 թվականի հունիսի 1-ից;
2. Ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը 20 աշխատանքային օր՝ 2011 թվականի հունիսի 1-ից մինչև հունիսի 28-ը ներառյալ:

Ա. ԳԻՉԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է